

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏ

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

2 (8)

ARMENOLOGICAL ISSUES

BULLETIN

ԵՐԵՎԱՆ – YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS
2016

ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՄՍԵՐԻ ԳԱՎԱԶԱՍԱԳՐՔԻ ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՃԵԳՐՏՈՒՄՆԵՐ

Բանալի բառեր – Աղվանք, կաթողիկոս, գավազանագիրք, վիմագիր, ճշգրտում,
արողություն, հակարոռություն

Աղվանից կաթողիկոսների գավազանագիրքը, ի տարբերություն Հայոց հայրապետների անվանացանկի, ունի բազմաթիվ թերություններ ու բացրողումներ¹: Դրանց մի մասը շտկվում ու լրացվում է ժամանակի անմիջական դրոշմը կրող վիմական սկզբնադրյուրների շնորհիվ: Վերջին տարիներս Աղվանից կաթողիկոսների գավազանագրքում հիմնականում հայերեն ձեռագրերի հիշատակարանների և այլ աղբյուրների հիմամբ որոշակի հավելումներ, ուղղումներ ու ճշգրտումներ կատարել է Ս. Բալայանը²:

Հակոբոս անվամբ կաթողիկոս առհասարակ բացակայում է այդ գավազանագրքից: Մինչդեռ Արցախի Մարտակերտի շրջանի Կոճղոտ գյուղի մոտ գտնվող Ամենափրկիչ վանքի մուտքի կիսակամար ճակատաքարի վրա արձանագրված է, որ «Ի հայրապետութեա Տի Յակոբոսայ և յիշխանութեա Վախտանգա, որդո Հասանա» կառուցվել է տեղի Ս. Աստվածածին եկեղեցին³: Այս անթվակիր արձանագրության ժամանակը որոշում է Ս. Բարիուղարյանը ելակետ ընդունելով Հասանի որդի Վախտանգի հիշատակությունը, որը վախճանվել է 1214 թվականին⁴:

¹ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 43-44, նաև՝ նույնից հանված «Աղվանից կաթողիկոսների գավազանագիրք» հավելվածը սույն հոդվածի շաբաթանքի վերջում: Այսուհետև Հավելված Ա:

² Տե՛ս Բալայան Ս., Հայ աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, 2008: Մենք Ս. Բալայանի ուղղումներն ու լրացումները՝ աստղանիշերով առանձնացված, ներառում ենք Աղվանից կաթողիկոսների՝ մեր կողմից ներկայացվող ցանկում (տե՛ս Հավելված Բ):

³ «Դիվան հայ վիմագրության», պրակ Վ. Արցախ, կազմեց Ս. Բարիուղարյան, Երևան, 1982, էջ 91: Այսուհետև՝ Դիվան, պր. Վ և էջը:

⁴ Տե՛ս նույն տեղում: Ծարի 1279 թ. արձանագրությունն էլ, որին հղում է Ս. Բալայանը, նույնպես սկսվում է «Ի հայրապետութիւն» բառով (տե՛ս Դիվան, պր. Վ, էջ 218), և որից հետո հիշատակվող Տեր Աթանասին արցախագետ ուսումնասիրողը երկմտանքով է կաթողիկոս համարում՝ իրավացիորեն պատճառաբանելով, թե հիշյալ ժամանակներում Աղվանից արռողի գահակալը եղել է Ստեփանոս Դ (1262-1323), ինչը փաստվում է բազմաթիվ օրինակներով (տե՛ս Բալայան Ս., նշվ. աշխ., էջ 152-153): Բացի այդ, Ս. Բալայանի համար որպես երկրորդ

Հիշյալ ժամանակ Ամենայն հայոց կաթողիկոսը Հովհաննես Զ Ստեցին էր (1203-1221), հետևապես արձանագրությունում վկայակոչված է Աղվանից հայրապետը: Ուստի դրանից ելնելով՝ Հակոբոս կաթողիկոսին պետք է ներառել Աղվանից քահանայապետների անվանացանկ՝ զետեղելով Ստեփանոս Գ (ըստ զավագանագրքի՝ 1155-1195) և Հովհաննես Զ (ըստ նույնի՝ 1195-1235) հայրապետների միջև: Այդ դեպքում Աղվանից կաթողիկոսների անվանացանկի կամ զավագանագրքի համապատասխան հատվածը կունենա հետևյալ տեսքը. Ստեփանոս Գ (1155-1214), Հակոբոս (1214), Հովհաննես Զ (1215-1235)¹: Հակոբոսի գահակալության համար նշում ենք մեկ տարի, քանի որ նա այլ աղբյուրներից մեզ հայտնի չէ:

Ժամանակին Գանձասարի վանքի զավթում եղել է տապանաքար, որի վրա արձանագրված էր. «Այս է տապան Գրիգոր կաթողիկոսին Աղուանից :ՌՃԲ: (1653) թուին»²: Այս Գրիգորի անունը նույնպես բացակայում է Աղվանից կաթողիկոսների զավագանագրքից: Նրա անունը որպես Գրիգոր Դ, պետք է զրառվի Սիմեոն Գ-ի (1616) և Պետրոս Խանձկեցի (1653-1675) կաթողիկոսների միջև: Եթե Գրիգորի տապանաքարը գտնվեր ոչ թե Գանձասարի վանքում, այլ մեկ ուրիշ վայրում, ապա կարելի կլիներ կարծել, թե նա եղել է հակարռ կաթողիկոս. «XVII դ. կեսից Խաչենի Երից Մանկանց վանքում ստեղծվել է հակարռ կաթողիկոսություն, ինչը երկփեղկել է»³ Աղվանից աթոռը մինչև XIX դարը:

Վաստարկ ծառայում է Ս. Օրմանյանի այն տեսակետը, թե իին ժամանակներում հայրապետ և հայրապետություն գործածվում էին ոչ միայն կաթողիկոս և կաթողիկոսություն իմաստներով, այլև որպես վանահայր (տե՛ս Օրմանեան Ս., Ազգապատում, հ. Բ, ս. 1971): Այո՛, վանահայր, բայց ոչ սովորական, այլ եպիսկոպոսի նվիրապետական աստիճան ունեցող թեմակալ առաջնորդ վանահայր պարագայում. հայրապետ բառը դեռևս վաղ միջնադարից, կաթողիկոսից զատ, գործածվել է առավելապես եպիսկոպոս իմաստով: Արդ, հարց է ծագում՝ ինչպէ՞ս բնագրերում զանազանել հայրապետի (հայրապետութեան) կիրառությունը կաթողիկոս (կաթողիկոսութիւն) և եպիսկոպոս (եպիսկոպոսութեան) իմաստներով: Ըստ վիմագրերի՝ մեր համեմատական դիտարկման, եթե բնագրում «ի հայրապետութիւն» բառը նախորդում է բարձրաստիճան իշխանավորին (Երբեմն բացառությամբ աշխարհակալ տիրակալների, թագավորների), ապա խոսքը կաթողիկոսի մասին է, իսկ հաջորդելու դեպքում՝ եպիսկոպոսի (տե՛ս օրինակներ՝ «Դիվան հայ վիմագրության», պրակ III, Վայոց ձոր, կազմեց Ս. Բարիուղարյան, Երևան, 1967, էջ 123, 144-145, «Դիվան հայ վիմագրության», պրակ IV, Գեղարքունիք, կազմեց Ս. Բարիուղարյան, Երևան, 1973, էջ 19, 243, այսուհետև՝ Դիվան, պր. IV և էջը): Հետևապես, թե՛ Տեր Հակոբոսը (1214), թե՛ Տեր Արանասը (1279) կաթողիկոսներ են, որոնց անունները պետք է ներառել զավագանագրքում: Ծարի 1279 թ. վիմագրում Տեր Արանասից հետո իիշատակվող Դոփի որդին Հասանն է, որը թերևս Արցախի իշխանապետն էր Հասան Զալալ Դոլայի մահապատճից հետո (1261): Բացառված չէ, որ Արանասը մի կարձատն ժամանակ աթոռակցած լինի Ստեփանոս Դ-ին:

¹ Տե՛ս Հավելված Բ:

² Դիվան, պր. V, էջ 66: Ըստ Ս. Բալայանի՝ Գրիգորը կաթողիկոս է եղել 1634-1653 թթ. (տե՛ս Բալայան Ս., նշվ. աշխ., էջ 172-173):

³ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 43:

Ինչ վերաբերում է վերոհիշյալ Սիմեոն Գ-ին, ապա պետք է վերանայել նաև նրա զահակալության ժամանակը: Բանն այն է, որ Սարտակերտի Սեծիրանց Ս. Հակոբա վանքի սրահի ՌԿԳ (1614) թվականով գեղաքանդակ խաչքարի արձանագրությունում հիշատակվում է Սիմեոնը: Հատկանշական է, որ նա իրեն կոչում է «Տէր Սիմեոն կաթողիկոս Սեծարանիս»¹: Կարծում ենք՝ կաթողիկոսն իրեն այդպես է անվանել՝ նկատի ունենալով այն, որ Աղվանից հայրապետական աթոռը, ինչպես հետո կտեսնենք, պատմական որոշակի փուլերում հաստատված է եղել նաև Սեծիրանի հոչակավոր Ս. Հակոբի վանքում: Ի դեպ, նա թաղված է նույն սրահում. այնտեղ նրա տապանաքարն է. «Այս է հանգիստ Սիմեոն կաթողիկոսին, թվին յՌԿԵ: (1616)»² մակագրությամբ: Այսպիսով, Աղվանից կաթողիկոսների ցանկի վերոհիշյալ հատվածը պետք է խմբագրվի հետևյալ կերպ՝ Սիմեոն Գ Սեծիրանի (1614-1616), ..., Գրիգոր Դ (1634-1653)*, Պետրոս Խանձկեցի (1653-1675)³: Ավելորդ չենք համարում նշել, որ Սեծիրանց վանքի արևմտյան գավթում է թաղված «Առատակիս Կթղկս»-ը⁴: Կարծում ենք՝ տապանագիրը վերաբերում է Աղվանից Արիստակես Գ Քոլատակցի կաթողիկոսին (1588), ով ծագումով վանքին մոտ գտնվող Քոլատակ գյուղից էր:

Աղվանից կաթողիկոսների գավազանագրքում Առաքել Սոկյութլվեցին նշված է 1481-1497, իսկ նրա հաջորդը՝ Արիստակես Բ-ն՝ 1515-1516 թթ.⁵: Փաստորեն բաց են մնում 1497-1515 թվականները: Այդ բացը նախ լրացվում է վերջերս մեր երիտասարդ գործընկեր Ա. Հարությունյանի հրատարակած Աղվանից նշանավոր կաթողիկոս Եսայի Հասան-Զալայյանի (1702-1728) գրառած Արցախի արձանագրությունների ժողովածուի վերջում ամփոփված տարբեր ձեռագրերից քաղված հիշատակարաններից մեկի շնորհիվ. «Հրամանաւ Առաքել կաթուղիկոսին յաթոռն Զալեթու ի թուին Հայոց ԶԻԸ. (1479), յաւարտն ԶԾԳ. (1504) թուին»⁶: Ապա՝ «Թ. ԶԿ (1511), Ստեփանոս կաթողիկոս» փակագրությամբ, որ ժամանակին վերծանել է Ս. Սաղումյանը Գանձասարի վանքի գլխավոր եկեղեցու հյուսիսային պատից⁷: Վիմագրագետի վստահեցմամբ. «Թեև նշված տարիներին Արցախում Ստեփանոս կաթողիկոս չի հիշվում (մենք չգիտենք այդ մասին), սակայն վերծանությունը համոզիչ է»⁸: Նույն ԶԿ (1511) թվին Ճալեթի վանքի արձանագրությունում

¹ Դիվան, պր. V, էջ 18:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Հավելված Բ:

⁴ Դիվան, պր. V, էջ 22:

⁵ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, նաև՝ Հավելված Ա:

⁶ Հարությունյան Ա., Եսայի Հասան-Զալայյանի վիմագրագիտական վաստակը (ըստ ՄՄ Հ մթ 7821 ձեռագրի), «Էջմիածին», 2015, Ժ, էջ 158:

⁷ Սաղումյան Ս., Փակագրությունը հայ վիմագրության մեջ, «Լրաբեր ՀԳ», 1980, 3, էջ 80:

⁸ Նույն տեղում:

հիշատակվում է. «...ես տէր Առաքեալ կաթուղիկոս գնեցի վերստին պարոն Հասանբեկն եկեղեցւոյս դրան Ճալեթ զիւլս ԳՌ (3000) թանկայ. խարձ արի եւ տվի վասն մեր հոգւոյս ոք Աստուածածնինս...»¹: Ըստ այդմ, գավազանագրի այդ հատվածը պետք է սրբազնի՝ Առաքել Սույութլվեցի (1479-1511*), Ստեփանոս (1511), Արիստակես Բ (1511-1521*)²:

Բավականին ուշագրավ է վերոհիշյալ արձանագրությունը. կաթողիկոս Առաքել Սույութլվեցին հայտնում է, որ ինքը պարոն Հասանբեկից (սրան պետք է ենթադրել գավառի տէր, իշխանավոր) 3000 թանկով (չնայած 1507 թ. Պարսից շահ Իսմայիլ Սեֆյանը (1502-1524) նվաճում է Հայաստանը, բայց նկատելի է, որ տակավին շրջանառության մեջ էր մոնղոլական դրամը թենգեն, որը գործածական էր նաև կարա-կոյունլու (1410-1468) և ակ-կոյունլու (1468-1502) թուրքմենական տիրապետությունների օրոք), գնում է Ճալեթ զյուղը, այն խարձ անում, այսինքն՝ դուրս գրում (հարկերից ազատում) և նվիրաբերում Ս. Աստվածածին եկեղեցուն: Ըստ որում, արձանագրությունը հայտնում է, որ կաթողիկոսը Ճալեթ զյուղը գնել է վերստին, այսինքն՝ երկրորդ անգամ: Այդպիսի հիշատակությունների մենք հանդիպում ենք քանիցս. զյուղն ինչ-որ ժամանակ պատկանել է վանքին, ապա անհայտ պատճառներով օտարվել է, մինչև որ նորից գանձագին արվելու ճանապարհով վերստին վերադարձվել է ս. ուխտի միաբանության իրավասությանը:

Ճալեթի վանքը գտնվել է Բուն Աղվանքի Վարդաշենի (1989 թ.-ից՝ Օդուզ) շրջանում՝ շրջկենտրոն Վարդաշեն քաղաքից 4 կմ արևմուտք «Ճալեթ զյուղի հյուսիսային ծայրում, անտառապատ սարերով շրջապատված գեղատեսիլ վայրում, պահպանվում է(ր- Ա. Մ.) Սբ. Աստվածածին հոչակավոր ու պատմական փառավոր անցյալով նշանավորված վանական համալիր-հուշարձանախումբը՝ բաղկացած երկու եկեղեցիներից, միաբանության սենյակներից, պարսպապատերից և գերեզմանոցից: Կանքը երկրամասի հայտնի մշակութային կենտրոններից էր, զրչօջախ, կաթողիկոսահիստ (XV-XVI դարերում)»³:

Ճալեթի վանքում Աղվանից Կարապետ կաթողիկոսը 1411 թ., համաձայն արձանագրության, կառուցել է եկեղեցի⁴: Այդ աղոթատան անվանումը կառուցող կաթողիկոսը մեզ չի ավանդել, բայց պետք է ենթադրել, որ այն վերոհիշյալ Ս. Աստվածածինն է: «Շենքն ունի միանավ թաղածածկ բազիլիկի հորինվածք: Կառուցված է անտաշ ու կոպտատաշ քարերով, կրաշաղախով:

¹ «Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց», կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 176, այսուհետև՝ Վիմական տարեգիր և էջը: Հմմտ. Կարապետյան Ս., Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, Երևան, 1997, էջ 90:

² Տե՛ս Հավելված Բ: Ըստ Ս. Բալայանի պրատումների՝ Արիստակես Բ-ը վախճանվել է 1521 թ. (տե՛ս Բալայան Ս., նշվ. աշխ., էջ 167):

³ Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 87, 89:

⁴ Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 171, Կարապետյան Ս., նշվ. աշխ., էջ 89:

Սրբատաշ են միայն անկյունաքարերը: Վերանորոգումների ժամանակ օգտագործվել է նաև աղյուս»¹:

Ինքն էլ՝ Կարապետ կաթողիկոսը, թաղված է այդ վանքում: Նրա տապանաքարին յոթ տողով փորագրված է հանգավորված արձանագրություն: Ճիշտ է, ջարդված է տապանաքարի տարեթվի՝ ՊԿ... (860) միավոր տարը, սակայն այն պետք է «Թ» (9) ենթադրել (ՊԿԹ 869), որպեսզի համապատասխանի անվանացանկի թվականին (869+551=1420):

Ճալեթի վանքում է գտնվել նաև մեկ ուրիշ տապանաքար՝ հետևյալ արձանագրությամբ. «Ի թվին ջիդ. (1475), հանգիստ Թովմայ կաթողիկոսին»²: Անշուշտ խոսքը Աղվանից կաթողիկոս, ըստ ցանկի Թումա Սոլյութվեցու մասին է, որի անվան կողքին կա միայն 1471 թվականը³: Հետևապես հիմք ընդունելով առկա վիմագրական փաստը՝ հարկ է անվանացանկի կամ գավազանագրքի այդ հատվածը խմբագրել. Թովմա Սոլյութվեցի՝ 1471-1475 թք.⁴:

Վերոհիշյալ Առաքելը նույնպես Սոլյութվեցի է հիշատակվում, ինչը կարող է նշանակել, որ նա Թովմայի համագյուղացին է, գուցե՞ ազգականը կամ եղբորորդին: Սոլյութլուն Մեծ Սոկութլուն է՝ Ուտեկանը, գտնվել է «Դուրկան գետի աջ կողմում, գետափից շուրջ 5-6 կմ արևմուտք, շրջկենտրոնից 30 կմ հարավ: Այն հայ մատենագրության մեջ միևնույն անփոփոխ Սոկութլու անվամբ հիշատակվում է սկսած 1434 թվականից: Ամբողջ XV դարում ու նաև հետագյում գյուղում ստեղծվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնց պահպանված մի չնշին մասը հասել է մեզ ու պահպում է Ս. Մաշտոցի անվան Մատենադարանում»⁵:

Ուշադրության արժանի է Մեծ Սոկութլու գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու 1671 թ. շինարարական արձանագրությունը, որտեղ Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Դ Չուլայեցուց (1655-1680) հետո հիշատակվում է ոչ թե Աղվանից օրինավոր հայրապետ Պետրոս Խանձկեցին (1653-1675), այլ հակառակ Սիմեոն⁶ Մեծշինեցին:

Վիմագրական համեմատական քննությամբ մակաբերվում է այն իրողությունը, որ XV-XVII դդ. Աղվանից աթոռանիստի համար մրցակցություն է եղել Գանձասարի, Մեծիրանց Ս. Հակոբա վանքի և Ճալեթի մենաստանի միջև: Այսպես, Աղվանից Կարապետ կաթողիկոսը (1402-1420) 1411 թ.

¹ Կարապետյան Ս., նշվ. աշխ. էջ 89: Ճալեթի վանքի երկրորդ եկեղեցին, նույնպես Ս. Աստվածածին, կառուցվել է XIX դ.: Եղել է եռանավ բազիլիկի շրեղ ու ընդարձակ շինություն՝ ամբողջովին կառուցված սրբատաշ քարերով (տե՛ս նույն տեղում):

² Վիմական տարեգիր, էջ 174, Կարապետյան Ս., նույն տեղում, էջ 90:

³ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, նույն տեղում, նաև՝ Հավելված Ս.:

⁴ Տե՛ս Հավելված Բ:

⁵ Կարապետյան Ս., նույն տեղում, էջ 91:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 92:

հայրապետական աթոռը հաստատում է Ճալեթում: Սակայն միևնույն ժամանակ և դրանից հետո էլ, ըստ Ս. Բալայանի, Գանձասարում շարունակում էին նստել կաթողիկոսներ (դա վկայվում է նաև վիմագիր հիշատակությամբ), մի հանգամանք, որը հետազոտողին առիթ է տվել եզրակացնելու «քննարկվող ժամանակաշրջանում միաժամանակ երկու կաթողիկոսությունների գոյության մասին, ընդ որում, Ճալեթի կաթողիկոսների մասին հանդիպող բոլոր հիշատակություններում Աղվանից անվան հետ գործածված է նաև “ի յարոռն Ճալեթոյ” արտահայտությունը, ինչը հավանաբար կատարված է երկու Աղվանից աթոռները տարբերակելու նպատակով»¹:

Մինչ այդ աթոռանիստը, ինչպես ընդունված է կարծել, եղել է Գանձասարը, որտեղ այն տեղափոխվել է Խամշի վանքից. ըստ Կիրակոս Գանձակեցու Աղվանից Ներսէս կաթողիկոսը (1235-1262) 1240-ական թվականների սկզբներին նստում էր հայոց և վրաց ամիրսպասալար, աթաբեկ Ավագ Զաքարյանի (1213-1250) տիրութներում գտնվող Միավոր գավառի Խամշի կոչվող վանքում²: Փաստորեն այդ մենաստանը Աղվանից կաթողիկոսանիստ եղել է ոչ միայն Փառիսոսի թագավորությունում (IX-XI դդ.): Կարապետի՝ Ճալեթ տեղափոխվելուց հետո Գանձասարում աթոռակալել է Դավիթ անվամբ կաթողիկոս, ինչը փաստում է նրա պահպանված տապանաքարը այդ վանքի գավթում³: Սակայն Հովհաննես Է Հասան-Զալայյանը (1441-1470) հաստատվում է ոչ թե հայրենի Գանձասարում, այլ գահանիստ է հոչակում իրենց տոհմական վարչական և հոգևոր իրավասության ներքո գտնվող Սեծիրանց Ս. Հակոբի վանքը: Այդ մասին հուշում է վանքի սրահում գտնվող երա տապանաքարը. «Այս է հանգիստ Տի Ովհաննես կաթողիկոսին Աղվանից, թվի ինյալ Ձժթ: (1470)»⁴:

Հովհաննեսին կաթողիկոսական գահին հաջորդում են Տեր Սատթեռուր (1470-1476), Շմավոն Ա (1476-1498), որոնք արդեն նստում էին Գանձասարում⁵: Միևնույն ժամանակ Ճալեթում շարունակում է աթոռակալել Թովմա Սոլյութլվեցին (1471-1475):

Ի վերջո XVI դ. կեսին Սարգիս Ա Ղշլաղեցու (1546-1555) օրոք կաթողիկոսական աթոռանիստ մնում է միայն Գանձասարը. Ճալեթը դուրս է մղվում պատմական ասպարեզից, ինչը Ս. Բալայանի եզրահանգմամբ պայմանագրության և Հասան-Զալայյան տոհմի նկատմամբ վարած մեղմ ու սիրաշահող

¹ Բալայան Ս., նշվ. աշխ., էջ 168: Գանձասարում աթոռի հաստատվելու երևոյթը նկատում ենք 1470 թվից:

² Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 278, 290:

³ Տե՛ս Բալայան Ս., նշվ. աշխ., էջ 163:

⁴ Դիվան, պր. V, էջ 17:

⁵ Տե՛ս Բալայան Ս., նշվ. աշխ., էջ 165-166:

քաղաքականությամբ¹: Այսինչ XVII դարի սկզբին Սիմեոն Գ-ը հաստատվել էր Ս. Հակոբի վանքում, որտեղ նրա տապանաքարն է, ինչպես վերև ասել ենք:

Ի դեպ, գավազանազրբում Սարգիս Ա-ի անվան կողքին գրված է միայն 1554 թվականը²: Սինդեռ նա 1546 թ. Գանձասարի վանքի տաճարի հյուսիսային պատի կենտրոնական մասում արտաքուստ թողել է նվիրատվական արձանագրություն³: Սարգիս Ա-ի անվանական տվյալներն այլ արձանագրությունների հիշատակությունների հետ համեմատելիս հանգում ենք եղբակացության, որ նա եղել է Հասան-Զալալյան տոհմի ներկայացուցիչ: Մեր եզրահանգումը հիմնավորվում է Բ. Ռուբերտ Շ. Օքթելուն հղմամբ ժամանակին Գանձասարի վանքի միաբանական խցերից մեկում եղած հետևյալ արձանագրությամբ: «Նորոգեցաւ ձեռամբ Սարգիս կաթողիկոսին Աղուանից, որ է յազգէն Զալալ Դօլին»⁴: Ըստ Բ. Ռուբերտ Շ. «խոսքը Գանձասարի վանքի վերանորոգմանն է վերաբերում»⁵: Եսայի Հասան-Զալալյանի ժողովածուի վերջում գետեղված Երից Մանկանց մագաղաթյա Ավետարանի հիշատակությունը ստույգ թվագրում է Սարգիս Ա-ի մահվան ժամանակը: «Ի ՌԴ. (1555) թուին Սարգիս կաթողիկոսն վախճանեալ ի մեհեկի ԺԹ. (19) օրն Ե (5) շաբաթ, գրեալ վկայութեամբ Սիմեօն կաթողիկոսի, ի ՌԼԶ. (1587), թուիս Հայոց»⁶:

Մեր խնդրանքով տոմարագետ Ռ. Վարդանյանի կատարած հաշվարկների համաձայն՝ ՌԴ թուի մեհեկի ԺԹ (19) համապատասխանում է 1555 թ. հոկտեմբերի 4-ին:

Ինչ վերաբերում է հիշատակարանի հեղինակ Սիմեոն կաթողիկոսին, ապա հիշյալ ժամանակաշրջանում այդպիսի անվամբ հայրապետ գավազանագրքում չի նշվում, հետևապես նրան պետք է նույնացնել Շմավոն Բ-ի (1586-1611) հետ:

Սարգիս Ա-ի հաջորդներից Գրիգորը՝ որդի Մեյրամբեկի (1559-1563), Գանձասարի վանքի գավթում 1563 թ. ձեռքին խաչ պարզած հեծյալի և զինութաս բոնած մարդու պատկերաքանդակներով գեղակերտ մի խաչքար է կանգնեցրել, որի արձանագրությունում իրեն կոչում է «Գրիգորիս կաթողիկոս»⁷: Նա այդ թվականին էլ մահացել է. Եսայի Հասան-Զալալյանի ժողովա-

¹Տե՛ս նույն տեղում, էջ 168-170:

²Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 43, նաև՝ Հավելված Ա:

³Տե՛ս Դիվան, պր. V, էջ 46:

⁴Ռուբերտ Շ., Գանձասար, Երևան, 1981, էջ 151:

⁵Նույն տեղում, էջ 151-152:

⁶Հարությունյան Ա., նշվ. աշխ.:

⁷Դիվան, պր. V, էջ 67: Ի դեպ, նա Գրիգորիս է վկայված նաև Եսայի Հասան-Զալալյանի ժողովածուի 1559 թ. հիշատակարանում (տե՛ս Հարությունյան Ա., նշվ. աշխ.): Ըստ Մաֆֆու կողմից արձանագրված մի ձեռագրի վկայության՝ Գրիգորիս կաթողիկոսը վախճանվել է 1573 թ. (տե՛ս Բալայան Մ., նշվ. աշխ., էջ 172): Սակայն այս թվականը չի համերաշխվում Եսայի

ծուի հիշատակարաններից մեկում 1563 թ. վկայակոչվում է «Տեր Փիլիպպոս կաթոլիկոս»¹: Դա, անշուշտ, Փիլիպպոս Տումեցին է, որն «ըստ ցանկերի, գահակալել է 1 տարի»²: Առհասարակ, զավազանագրքի այդ մասում առկա են հակասական տվյալներ. «Գրիգոր որդի Մեյրամբեկի (1559-1574), Պետրոս Գ (1571), Դավիթ Թ (1573)»³: Նպատակահարմար է ցանկի այդ հատվածը սրբագրել այս կերպ. Գրիգոր, որդի Մեյրամբեկի (1559-1563), Փիլիպպոս Տումեցի (1563-1564), Պետրոս Գ (1564-1571), Դավիթ Թ (1571-1574)⁴:

Գրիգորի եղբոր՝ Հովհաննես Ը, որդի Մեյրամբեկի կաթողիկոսի (1574-1584) տապանաքարը գտնվում է Գանձասարի վանքի գավթում⁵: Այդ ժամատան արևմտյան պատի հյուսիսային մասում դրսից քանդակված է խաչ խորանի մեջ, իսկ կողքին երեք տողով արձանագրված է. «Ս խաչս բարեխաւս Յոհաննս կաթողիկոսին»⁶: Ըստ Ա. Բարխուդարյանի՝ «Հավանաբար 1586 թ. վախճանված կաթողիկոսին է»⁷: Հովհաննեսի հայրապետական տարիներին, մասնավորապես 1576 թ. մեծ, գեղաքանդակ խաչքար է կանգնեցվել Արցախի Մարտունու շրջանի Ծովատեղ գյուղի արևելյան եզրի գերեզմանատան կենտրոնում կառուցված Մելիք-Փաշայան տոհմի տապանատանը⁸: Նույն վայրում կա մեկ ուրիշ մեծ, գեղակերտ կործող, որի քիվին արձանագրված է. «Թվինյ ՇԱԼԵ: (1586) ի հայրապետութիւնի Տավթի, առաջնորդութիւն Մելիք Փաշի...»⁹:

Աղվանից կաթողիկոսների զավազանագրում Դավիթը հիշատակվում է 1584 թվականով¹⁰: Հետևապես, վերոհիշյալ վիմագրի ելակետով նրա անունը ցանկում պետք է երկու տարով այս կողմ բերել 1586, իսկ Դավթին ըստ ցուցակի հաջորդած Աթանասին տանել նրանից առաջ և Հովհաննես Ը-ից հետո: Գավազանագրքում այդ հատվածն ունի հետևյալ տեսքը. Հովհաննես Ը, որդի Մեյրամբեկի (1574-1586), Դավիթ (1584), Աթանաս (1585), Շմավոն Բ (1586-1611)¹¹: Առաջարկում ենք այդ մասը փոխել հետևյալ կերպ. Հովհաննես

Հասան-Զալայանի ժողովածուի հիշատակարաններից մեկում 1563 թ. Փիլիպոսի՝ կաթողիկոս հիշատակմամբ: Գուցե՝ վերջինս եղել է աթոռակից կաթողիկոս: Բայց դա ել չի ապացուցվում այլ վկայություններով:

¹ Տե՛ս Հարությունյան Ա., նշվ. աշխ.:

² Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 44, նաև՝ Հավելված Ա:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս Հավելված Բ:

⁵ Տե՛ս Դիվան, պր. V, էջ 66:

⁶ Նույն տեղում, էջ 60:

⁷ Նույն տեղում:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 159-160:

⁹ Նույն տեղում, էջ 160:

¹⁰ Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, նաև՝ Հավելված Ա:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 44, նաև՝ Հավելված Ա:

Հ. որդի Մելքոն Աբամելիկի (1574-1584), Աթանաս (1584-1585), Դավիթ Ժ (1585-1586), Շմավոն Բ (Սիմեոն)՝ 1586-1611¹:

Կաթողիկոսական գահին Շմավոն Բ-ի գահակալությունից երկու տարի հետո բազմած Արիստակես Գ Քոլատակեցին (1588) հայրապետական աթոռը նորից տեղափոխում է Ս. Հակոբա վանք, ինչը հուշում է այդտեղ նրա տապանաքարի առկայությունը, որի մասին վերը խոսել ենք: Աթոռն այստեղ մի քանի տասնամյակ մնալուց հետո՝ XVII դ. կեսին, Վերջնականապես վերահաստատվում է Գանձասարում:

Գեղարքունյաց Վարդենիսի տարածաշրջանի Ազատ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու գավթի հարավային մուտքի կամարակալ քարի վրա դրսից փորագրված է հետևյալ շինարարական արձանագրությունը. «Ի թվինք. ՌԿԵ: (1618), ի թագաւորութեան յԱրագ շահին և պարոնութեան Ամիրիսան սովորանին, ի կաթողիկոսութեան յԱղվանից Տէր Յովիաննիսի, կամաւն Այ. եւ Յոհաննէս նուաստ վարդապետս շինեցի գեկեղեցիս ի փրկութիւն հոգո իմոյ և կրկնակի ծնողաց իմոց...»²:

Պարսից շահ Աբբաս Ա-ին (1587-1628) ժամանակակից այս կաթողիկոսի անունը նույնպես չկա Աղվանից քահանայապետների ցանկում: Այն՝ որպես Հովհաննէս Թ (1618-1623*), պետք է ներառել Սիմեոն Գ Մեծիրանցի (1614-1616), Գրիգոր Դ (1634*-1653) և Պետրոս Խանձկեցի (1653-1675) կաթողիկոսների միջև³:

Դեռևս թուրքմենական կարա-կոյունլու, ակ-կոյունլու ցեղախմբերի տիրապետությունների (XV-XVI դդ.) օրոք վարչական բաժանմամբ սովորան կամ սովորան կոչվում էր գավառապետը, որը պարսկական իշխանության օրոք (XVI-XIX) մելիքն էր: Հետաքրքրական է, որ մեկ դարից ավելի պարսիկներն իշխում էին Հայաստանում, հետևապես Ազատի արձանագրությունում Ամիրիսանը պետք է կոչվեր մելիք, մինչդեռ շարունակվում է անվանվել թուրքմենական ժամանակներին հատուկ կոչմամբ: Ինչ վերաբերում է Ամիրիսանին, ապա նրան պետք է համարել Սողոքի արևելյան մասի և Ծար գավառի իշխանական Մելիք-Ուլութելյանների տոհմի ներկայացուցիչ, որի տոհմակիցները, ըստ Ա. Հովհաննիսյանի, Գեղարքունիքում մելիքական առաջնայնության համար երբեմն մրցակցում էին ազգակից գերհզոր Մելիք-

¹ Տե՛ս Հավելված Բ:

² Դիվան, պր. IV, էջ 369: Ըստ Ս. Բալայանի՝ Հովհաննէսի կաթողիկոսական հաստատման հրովարտակը շնորհել է շահ Աբբաս Ա-ը 1606-ին (տե՛ս Բալայան Ս., նշվ. աշխ., էջ 172): 1606 թ. հակասում է Ս. Հակոբա վանքի 1614 թ. և 1616 թ. վիմագրերին, որտեղ կաթողիկոս է հիշատակվում Սիմեոն Գ-ն, ինչպես կանխավ ասել ենք: Մնում է ևս մեկ անգամ ենթադրել, որ Աղվանից աթոռում Ամենայն հայոց հայրապետության ազդեցությամբ մի որոշ ժամանակ նույնպես եղել է աթոռակից կաթողիկոսության համակարգ:

³ Տե՛ս Հավելված Բ:

Շախնազարյանների հետ¹ (նստավայրը՝ Մեծ Սասրիկ), որոնք վիմագիր աղբյուրներում հորջորջվում են «իշխան երկրիս Գեղամայ», «իշխանաց իշխան», «պարոնաց պարոն» բարձրակոչ պատվանուններով:

Ուշադրության արժանի է այն փաստը, որ Գեղամա երկրի այդ տարածքները զարգացած միջնադարում ի հոգևորս ենթարկվել են Ամենայն հայոց կաթողիկոսությանը, ինչը փաստվում է Ազատից ոչ հեռու գտնվող Արտանիշի խաչքարի հետևյալ արձանագրությամբ. «Թվինք ՈԿԵ (1216)... ի հայրապետութեան Յովանին, իշխանութեան Իւանեի և Շահանշահի...»²: Նկատի են առնված Ամենայն հայոց կաթողիկոս Հովհաննես Զ Սուեցին (1203-1221), աթաքեկ Իվանե Զաքարյանը (1211-1227) և ամիրապասալար Շահնշահ Ա Զաքարյանը (1212-1251):

Այսպիսով, վիմագրերի շնորհիվ հնարավոր է դառնում համալրել Աղվանից կաթողիկոսների զավագանագիրքը պատմության էջերում մոռացված նոր անուններով, կատարել հայրապետական գահակալական ժամանակագրությունների որոշակի ճշգրտումներ, ինչպես նաև հետևել զանազան ժամանակներում աթոռանիստի տեղափոխություններին և Գանձասարի եռշակավոր վանքում նրա վերջնական հանգրվաննելուն:

¹Տե՛ս Հովհաննիսյան Ա., Գեղամայ և Ծարայ մելիքների տոհմը, «Բանքեր Հայաստանի գլուխական խնսութուութի», գիրք Ա. և Բ., Վաղարշապատ, 1921-1922, էջ 105-113:

²Դիվան, պրակ IV, էջ 382:

Հավելված Ա

ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԳԱՎԱԶԱՆԱԳԻՐՔ

Արսա (551-595), Վիրոն (595-629), Զաքարիա Բ (629-644), Հովհան Բ (644-671), Ուխտանես (671-683), Եղիազար (683-689), Ներսես Ա (689-706), Սիմեոն Ա (706-707), Միքայել (707-744), Անաստաս (744-748), Հովսեփ Ա (748-765), Դավիթ Բ (765-769), Դավիթ Գ (769-778), Մատթե Բ (778-779), Սովուես Բ (779-781), Ահարոն (781-784), Սողոմոն Ա (784), Թեոդորոս (784-788), Սողոմոն Բ (788-799), Հովհաննես Գ (799-824), Սովուես Գ (824), Դավիթ Դ (824-852), Հովսեփ Բ (852-877), Սամուել (877-894), Հովսան (Հովսան, 894-902), Սիմեոն Բ (902-923), Դավիթ Ե (923-929), Սահակ Բ (929-947), Գագիկ Ա (947-958), Դավիթ Զ (958-965), Դավիթ Է (965-971), Պետրոս Ա (971-987), Սովուես Դ (987-993), Մարկոս Ա, Հովսեփ Գ, Մարկոս Բ, Ստեփանոս Ա (հաջորդաբար՝ 993-1079), Հովհաննես Ե (1079-1129), Ստեփանոս Բ (1129-1131), Գագիկ Բ (Գրիգորիս, 1139), Բեճզեն (1140), Ներսես Բ (1149-1155), Ստեփանոս Գ (1155-1195), Հովհաննես Զ (1195-1235), Ներսես Գ (1235-1262), Ստեփանոս Դ (1262-1323), Սուրբիաս, Պետրոս Բ (հաջորդաբար 1323-1331), Զաքարիա (1331), Դավիթ Ը (հիշատակվում է միայն ցանկերում), Կարապետ (1402-1420), Հովհաննես Զ (1426-1428), Մատթեոս Գ (1434), Աթանաս (ըստ ցանկերի, գահակալել է 1 տարի), Գրիգոր Բ (ըստ ցանկերի), Հովհաննես Է, որդի Զալալի (1441-1470), Ազարիա (ըստ ցանկերի), Մումա Սոկութլվեցի (1471), Ստեփանոս (1476), Ներսես Դ (1478), Շմավոն Ա (1481), Առաքել Սոկութլվեցի (1481-1497), Արքստակես Բ (1515-1516), Մարգիս Ա Ղլաղեցի (1554), Գրիգոր, որդի Մեյրամբեկի (1559-1574), Պետրոս Գ (1571), Դավիթ Թ (1573), Փիլիպպոս Տումեցի (ըստ ցանկերի, գահակալել է 1 տարի), Հովհաննես Ը, որդի Մեյրամբեկի (1574-1586), Դավիթ (1584), Աթանաս (1585), Շմավոն Բ (1586-1611), Արիստակես Գ Քոլատակցի (1588), Մելքիսեդ Արաշեցի (1593), Սիմեոն Գ (1616), Պետրոս Խանձկեցի (1653-1675), Սիմեոն Դ Խոտորաշենցի (1675-1701), Երեմիա Բ Հասան-Զալալյանց (1676-1700), Եսայի Հասան-Զալալյանց (1702-1728), Ներսես Ե, հակաթոռ (1706-1736), Իսրայել (1728-1763), Ներսես (1763), Հովհաննես Ժ Գանձասարեցի (1763-1786), Սիմեոն Ե Խոտորաշենցի (1794-1810), Սարգիս Բ (1810-1815, 1815-1828-ին՝ մետրոպոլիտ):

Հավելված Բ

ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԳԱՎԱԶԱՆԱԳԻՐՔ (մասնակի լրացումներով ու ճշգրտումներով ընդգծված)

Աբաս (551-595), Վիրո (595-629), Զաքարիա Բ (629-644), Հովհան Բ (644-671), Ուխտանես (671-683), Եղիազար (683-689), Ներսես Ա (689-706), Սիմեոն Ա (706-707), Միքայել (707-744), Անաստաս (744-748), Հովսեփ Ա (748-765), Դավիթ Բ (765-769), Դավիթ Գ (769-778), Մատթե Բ (778-779), Սովոր Բ (779-781), Ահարոն (781-784), Սոլոմոն Ա (784), Թեոդորոս (784-788), Սոլոմոն Բ (788-799), Հովհաննես Գ (799-824), Սովոր Գ (824), Դավիթ Դ (824-852), Հովսեփ Բ (852-877), Մամուել (877-894), Հունան (Հովհան, 894-902), Սիմեոն Բ (902-923), Դավիթ Ե (923-929), Սահակ Բ (929-947), Գաղիկ Ա (947-958), Դավիթ Զ (958-965), Դավիթ Է (965-971), Պետրոս Ա (971-987), Սովոր Դ (987-993), Մարկոս Ա, Հովսեփ Գ, Մարկոս Բ, Ստեփանոս Ա (հաջորդաբար՝ 993-1079), Հովհաննես Ե (1079-1129), Ստեփանոս Բ (1129-1131), Գաղիկ Բ (Գրիգորիս, 1139), Բեճգեն (1140), Ներսես Բ (1149-1155), Ստեփանոս Գ (1155-1214), Հակոբոս (1214), Հովհաննես Զ (1215-1235), Ներսես Գ (1235-1262), Ստեփանոս Դ (1262-1323), Աթանաս (1279)*, Սուրիաս, Պետրոս Բ (հաջորդաբար՝ 1323-1331), Զաքարիա (1331), Դավիթ Ը (հիշատակվում է միայն ցանկերում), Կարապետ (1402-1420՝ Ճալեթում), Դավիթ (1418՝ Գանձասարում)*, Մատթեոս Գ (1423-1436՝ Ճալեթում)*, Հովհաննես Զ (1426-1428՝ Գանձասարում), Աթանաս (ըստ ցանկերի, գահակալել է 1 տարի), Գրիգոր Բ (ըստ ցանկերի), Հովհաննես Է, որդի Զալալի (1441-1470), Տեր Մատթեոս (1470-1476՝ Գանձասարում)*, Շմավոն Ա (1476-1498՝ Գանձասարում)*, Ազարիա (ըստ ցանկերի), Մատթեոս (1488), Արիստակես (ըստ ցանկերի), Թովմա Սոլյութվեցի (1471-1475), Ստեփանոս (1476), Ներսես Դ (1478), Սոարել Սոլյութվեցի (1479-1511)*, Ստեփանոս (1511՝ Գանձասարում), Արիստակես Բ (1511-1521*), Սարգս Ա Ղլաղեցի (1546-1554), Գրիգոր, որդի Մելքոն Մելքոն (1559-1563), Փիլիպպոս Տումեցի (1563-1564), Պետրոս Գ (1564-1571), Դավիթ Թ (1571-1574), Հովհաննես Ը, որդի Մելքոն Մելքոն (1574-1584), Աթանաս (1584-1585), Դավիթ Ժ (1585-1586), Շմավոն Բ Սիմեոն (1586-1611), Արիստակես Գ Քոլատակցի (1588), Մելքոն Արաշեցի (1593), Սիմեոն Գ Մեծիրանցի (1614-1616), Հովհաննես Թ (1618-1633*), Գրիգոր Դ (1634*-1653), Պետրոս Խանձկեցի (1653-1675), Սիմեոն Դ Խոտորաշենցի (1675-1701), Երեմիա Բ Հասան-Զալայանց (1676-1700), Եսայի Հասան-Զալայանց (1702-1728), Ներսես Ե, հակաթոռ (1706-1736), Իսրայել (1728-1763), Ներսես (1763), Հովհաննես Ժ Գանձասարեցի (1763-1786), Սիմեոն Ե Խոտորաշենցի (1794-1810), Սարգս Բ (1810-1815, 1815-1828-ին՝ մետրոպոլիտ):

Ашот Манучарян – Эпиграфические заполнения и уточнения хронологической таблицы Агванских католикосов

Благодаря армянским лапидарным надписям предоставляется возможность заполнить хронологическую таблицу Агванских католикосов пятью новыми именами: Акобос (1214), Атанас (1279), Степанос (1511), Иоанн IX (1618) и Григорий IV (1653). Одновременно уточняются годы властования некоторых Агванских католикосов, а также дается возможность следить за перемещением Агванского духовного престола католикосов в разные периоды: в монастырь Хамши (IX-XIII вв.), в Гандзасар (XIV в.), в Мециранский монастырь Св. Акоба (XV в.), в монастырь Чалета (XV-XVI вв.), вновь в Гандзасар (половина XVI в.), снова в монастырь Св. Акоба (начало XVII в.) и окончательно в Гандзасар (половина XVII в.-XIX в.).

Ashot Manucharyan – *Inscriptional Additions to and Clarifications of the Chronological Chart of the Agvank Catholicoses*

The Armenian inscriptions provide due opportunity to add the Chronological Chart of the Aghvank Catholicoses with five new names which are Hakobos (1214), Atanas (1279), Stepanos (1511), Hovhannes IX (1618) and Grigor IV (1653). The reign periods of the Catholicoses have also been clarified which makes it possible to follow the change of the location of the Aghvank Throne Seat in various periods. In the IX-XIII cc. it was in Khamshi Monastery, in the XIV c. in Gandzasar, in the XVe. in St. Hakoba Monastery of Metsirants, in the XV-XVIcc. Tjalet Monastery, in the mid. XVIc. in Gandzasar again, in the XVIIc it was in St. Hakob Monastery and finally in the mid. XVII c.-XIX c. in Gandzasar.